

Տեղեկանք

Դատախազության մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին

22 ապրիլի 2005թ.

ք. Երևան

Կոռուպցիայի դեմ պայքարի գործունեությունում Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինները հիմնականում ելակետ են ընդունում ինչպես հիմնախնդրին առնչվող միջազգային փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրությունում ամրագրված դրույթները, ինչի արդյունքում նշված ոլորտում իրավապահ մարմինների աշխատանքը ձեռք է բերել առավել համակարգված բնույթ: Ակներև է, որ երկրում գործում է հակակոռուպցիոն կայացած համակարգ, որտեղ, սահմանադրական կարգավիճակով պայմանավորված, իրենց վճռորոշ դերն ունեն դատախազության մարմինները:

Քննարկվող հարցադրման տեսանկյունից դատախազության մարմինների աշխատանքում նկատելի է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների մասին» ծրագրի դրույթների գործնական կիրառումը: Ընդ որում, ինչպես նշված, այնպես էլ խնդրին առնչվող մյուս իրավական ակտերի մշակման գործընթացում դատախազությունը ցուցաբերել է և շարունակում է ցուցաբերել հնարավորինս շահագրգիռ մոտեցում, ինչ-որ տեղ այդ փուլում իրականացնելով իրավական փորձաքննության բնույթի ծառայություն:

Հիշյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը, ինչպես նաև գործնականում ձևավորված կոռուպցիոն երևույթների համակողմանի վերլուծությունը բերում է այն միանշանակ համոզմանը, որ դատախազության մարմինների գործունեությունում անհրաժեշտ էր իրականացնել ոչ միայն իրավա-կազմակերպական, այլև՝ կառուցվածքային համալիր բարեփոխումներ: Ակնհայտ էր, որ դատախազության և մյուս իրավապահ մարմինների գործունեությունը պետք է հնարավորինս օպերատիվ և համարժեքորեն արտացոլեր քննարկվող ոլորտում ձևավորված հիմնախնդիրների լուծման պահանջները:

Միաժամանակ, ակնհայտ էր, որ լայնորեն կիրառելով արտասահմանյան երկրների դրական փորձն ու միջազգային կազմակերպությունների խորհրդատվական ու գործնական աջակցությունը, պետք է ընտրվեր այնպիսի մարտավարություն, որն առավել համահունչ լիներ կոնկրետ մեր երկրի սոցիալ-քաղաքական առանձնահատկություններին, ֆինանսատնտեսական հնարավորություններին և հիրավի հանդիսանար առավել իրատեսական ու արդյունավետ:

Քննարկվող ոլորտում աշխատանքներն առավել համակարգված իրականացնելու նպատակով գլխավոր դատախազության կոլեգիայում հաստատվեց «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների» ծրագրի կատարման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 2004 թվականի լրացուցիչ միջոցառումների» Ծրագիր, որում ընդգրկված միջոցառումները վերաբերում էին դատախազության գրեթե բոլոր ստորաբաժանումներին:

Այդ լրացուցիչ ծրագրի հիման վրա դատախազության մարմինների կողմից համալիր միջոցառումներ են իրականացվել մի շարք ուղղություններով: Այսպես, ուսումնասիրվել է հակակոռուպցիոն ծրագրի պահանջների կատարման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը՝ կրթության, տրանսպորտի և քաղաքաշինության ոլորտում, ջրային տնտեսության, տրանսպորտի և գյուղատնտեսության բնագավառներում իրականացվել են ստուգումներ միջազգային վարկային ծրագրերի իրականացման գործընթացում, ինչպես նաև պետական բյուջեից ֆինանսական միջոցների հատկացման և ծախսման ոլորտում պետական շահերի պաշտպանության վիճակը պարզելու նպատակով: Արարատի, Գեղարքունիքի,

Արագածոտնի մարզերում և Երևան քաղաքի համայնքներում ուսումնասիրվել է համայնքային բյուջեների կատարման ոլորտում պետական շահերի պաշտպանության վիճակը:

Ուսումնասիրություններ են կատարվել նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում հակամրցակցային գործունեության դեմ իրականացվող միջոցառումների, բնակչության պատասխարման համար նախատեսված պաշտպանական կառույցների շահագործման գործընթացում, քաղաքաշինության լիցենզավորման բնագավառում, բնապահպանության, հողահատկացումների ոլորտներում, առողջապահության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության կառավարչական գործառնություններ իրականացնող պետական մարմինների գործունեությունում Ծրագրի պահանջների կատարման հարցադրումներով:

2005թ. 1-ին կիսամյակի կտրվածքով ծրագրավորված են նույնաբնույթ այլ միջոցառումներ և: Այսպես, մի շարք գերատեսչություններում նախատեսված է ուսումնասիրել տեսչական և ստուգման գործառնություններով օժտված կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ստուգումների կազմակերպման և դրանց արդյունքների իրացման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը, Հայաստանի Հանրապետության նախարարության քրեակատարողական ծառայության համակարգի հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսպասարկման և նյութակենցաղային վիճակը, հանցագործության հետևանքով պետությանը, տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին պատճառված նյութական վնասի վերականգնման, քրեական դատավարության կարգով ներկայացված պետության գույքային շահերի պաշտպանության նպատակով ներկայացված հայցերի քննարկման վիճակը և այլն:

Վերոհիշյալ ծրագրային առաջադրանքների մի մասն արդեն ավարտվել է, որոնց արդյունքները քննարկվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոլեգիայում: Դրանց առնչությամբ կայացված որոշումները հավուր պատշաճի լուսաբանվել են զանգվածային լրատվության միջոցներով:

Այս ոլորտներում կատարված ուսումնասիրությունների արդյունքներով իրավասու գերատեսչությունների ղեկավարներին ուղղված միջնորդագրերի, ինչպես նաև հանրապետության Նախագահին ու կառավարությանը ներկայացված հաղորդումների արժեքը հատկապես պայմանավորված է նրանով, որ դրանցում կազմակերպական բնույթի հարցադրումների հետ մեկտեղ, համակարգված տեսքով վեր են հանված գործող օրենսդրությունում առկա բացթողումներն ու թերությունները, մասնավորապես, կոռուպցիոն երևույթների համար սողանքը հանդիսացող իրավական նորմերը, տրված են դրանք վերանայելուն ուղղված կոնկրետ առաջարկություններ: Այսպիսի մոտեցումն առանձին դեպքերում անհամեմատ ավելի մեծ կանխարգելիչ նշանակություն է ունենում, քան քրեական կամ վարչական կարգով հետապնդման լծակները:

Կատարված բազմաթիվ ուսումնասիրություններ հետագայում դրվել են Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության և վերահսկողության գործառնություններ իրականացնող այլ իրավասու մարմինների գործունեության հիմքում: Բնականաբար, այս դեպքերում ընդլայնվել է ստուգումների շրջանակը և ընդգրկվել են այնպիսի հարցադրումներ, որոնք դուրս են դատախազության լիազորություններից:

Այս առումով դատախազության գործունեությունում էական նշանակություն է տրվում գործադիր իշխանության զանազան օղակներում կոռուպցիոն բնույթի իրավախախտումների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները վերացնելու պահանջով ներկայացվող միջնորդագրերին: Միայն 2004թ. ընթացքում ներկայացվել է թվով 405 միջնորդագիր, որոնք վերաբերում են սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտների՝ բնապահպանության, պետական գույքի սեփականաշնորհման, քաղաքաշինության և այլն: Դատախազական այս ակտի առավելությունը կայանում է նրանում, որ այն, հանդիսանալով արդեն իսկ կատարված իրավախախտումների իրավական արձագանք, միաժամանակ, նպատակաուղղված է դրանց կանխմանը:

Հանրապետության իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետության և հանցավորության դեմ պայքարի ոլորտում իշխանության ու հասարակության ներդաշնակ փոխհամագործակցության մասին են վկայում նաև հանցավորության ընդհանուր վիճակի մասին համեմատական վիճակագրական տվյալները: Այսպես, ԱՊՀ երկրներում հանցավորության տեսանկյունից մեր երկիրն ակնհայտ բարվոք վիճակում է. 2004թ. տվյալներով հանցավորությունը մեր երկրում ունի հետևյալ վիճակագրական պատկերը՝ հանցագործության մակարդակի ցուցանիշը կազմում է 31,4 գործակից: Մինչդեռ, մյուս երկրներում պատկերը հետևյալն է. Բելոռուսում՝ 169,5, Վրաստանում՝ 57,9, Մոլդովայում՝ 84,7, Գրդըզստանում՝ 63,9, Դադստանում՝ 95,1, Ռուսաստանում՝ 111,6 և Ռուսաստանի Դաշնությունում՝ 201,5: Նկատենք, որ անհամեմատ բարձր է նաև հանցավորության բացահայտման վիճակը: Հավելենք նաև, որ Հայաստանն այն սակավաթիվ երկրներից է, որտեղ վերջին 5 տարիների ընթացքում նկատվում է հանցավորության նվազման կայուն միտում:

Ընդ որում, դատախազության մարմինների կողմից համարժեք ուշադրություն է դարձվել, հատկապես, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման վրա, որոնց մասին առավել հանգամանորեն կխոսվի ստորև: Բնականաբար, այդ բնույթի հանցագործությունների «ածը» հարաբերական բնույթ ունի, քանզի դա վկայում է ոչ թե դրանց բացարձակ աճի, այլ՝ տվյալ հանցագործությունների փաստերով բացահայտման աշխատանքների նկատելի բարելավման մասին: Մասնավորապես, այդ մոտեցմամբ կարելի է բացատրել, օրինակ, սովերային տնտեսության երևույթի հետ առնչվող հանցագործությունների աճը՝ 2004թ. արձանագրվել է այդպիսի հանցագործության 265 դեպք՝ նախորդ տարվա 107-ի դիմաց:

Այսպես, տարիներ շարունակ երկրում անհարկի լայն տարածում էր ստացել կազմակերպված խմբերի միջոցով մարդկանց առևտրին առնչվող հանցավորությունը: Այդ բնույթի հանցագործությունների բացահայտման վիճակի կտրուկ բարելավման արդյունքում դրանք նկատելիորեն նվազել են: Ընդ որում, դատախազության մարմինների կողմից նշված հանցագործությունների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները վերացնելու հարցադրումներով ներկայացվող միջնորդագրերի քննարկման արդյունքում արդյունավետ կանխարգելիչ միջոցներ են ձեռնարկվել նաև իրավասու պետական մարմինների կողմից:

Բացահայտման բարելավման նպատակով աշխատանքներ են իրականացվել մի քանի ուղղություններով: Ընդ որում, մշակվել են մեթոդական նամակներ, կազմակերպվել են ուսուցումներ, քրեական գործերի քննության ընթացքում տրվել են կոնկրետ ցուցումներ, իրականացվել են կառուցվածքային բարեփոխումներ և այլն:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերը նշված ծրագրում կարևորվում է հասարակության լայն մասնակցության խնդիրը և հասարակական կազմակերպությունների ու այլ միավորումների, ոչ պետական մարմինների, ինչպես նաև քաղաքական բոլոր ուժերի մոնիտորինգի դերը:

Թերևս, վերոհիշյալ հանգամանքով է բացատրվում այն, որ վերջին շրջանում դատախազությունում մի շարք հասարակական միավորումներից բազմիցս համագործակցության ու աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ են ստացվել: Ընդ որում, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ ներկայումս հաստատվել է դատախազության աշխատակիցների ու կոռուպցիայի դեմ պայքարում համապատասխան փորձ ու ձեռքբերումներ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կոռուպցիայի դեմ պայքարի հարցադրումներին նվիրված գիտատեսական ձեռնարկ պատրաստելու ծրագիր: Բնական է, որ համագործակցության հիշյալ եղանակը եզակի չէ:

Միաժամանակ, նույն կառույցի աջակցությամբ դատախազության գիտատեսական կենտրոնի աշխատակիցները թարգմանում են և շուտով հրատարակման կներկայացնեն ԵԱՀԿ-ի կողմից երաշխավորված և Եվրամիության բոլոր անդամ երկրների լեզուներով

թարգմանված «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ» աշխատությունը: Նախատեսված է հիշյալ աշխատության շուրջ ծավալել լայն քննարկումներ ու անցկացնել մի շարք գիտագործնական սեմինարներ:

Կոռուպցիայի դեմ պայքարում անխուսափելիորեն ընդլայնվել են միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակները: Ընդ որում, համաչափորեն հաշվի են առնվում նաև մեր երկրի առնչությամբ վերջիններիս կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները: Բնականաբար, այս մոտեցումը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ նախապատրաստվելու ԵԱՀԿ-ի կողմից 2003թ. ընդունված «Տնտեսական և բնապահպան ոլորտներում նոր ռազմավարության» պահանջներին, որոնց համաձայն ԵԱՀԿ-ի մասնակից բոլոր պետություններում ծրագրավորվում են կոռուպցիայի դեմ պայքարի հարցադրումներով համալիր ուսումնասիրություններ:

Նկատի ունենալով գործող օրենսդրության անկատարությունը (դա դրսևորվում է ոչ հստակ, իրարամերժ դրույթների առկայությամբ, անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի բացակայությամբ և այլն) խոցելի է դարձնում վարչական, իրավապահ ու դատական մարմինների կողմից դրանց կիրառման հնարավորությունները, կոռուպցիային նպաստող սողանցքներն ու հակասությունները վերացնելու նպատակով դատախազության կողմից բազմիցս կոնկրետ առաջարկություններ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարություն, որոնց առնչությամբ արձագանքը եղել է հավուր պատշաճի: Մասնավորապես, բոլոր այդ առաջարկությունները համակողմանիորեն քննարկելու և համապատասխան օրինագծեր մշակելու վերաբերյալ հստակ հանձնարարություններ են տրվել իրավասու նախարարություններին ու գերատեսչություններին, ինչի արդյունքում արժեքավոր բարեփոխումներ են կատարվել քրեական, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությունում, առողջապահության, բնապահպանության, քաղաքաշինության ոլորտները կարգավորող իրավական ակտերում և այլն:

Հիշյալ ոլորտում առանձին նախաձեռնություններ, ցավոք, համահունչ արձագանք չեն ստացել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում: Թերևս, ասվածի վառ օրինակն են հարկային հանցագործությունների համար պատասխանատվության խստացման և համապատասխան հողվածների դիսպոզիցիաները հստակեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատախազության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից համատեղ մշակված օրենսդրական ակտի քննարկման արդյունքները: Սակայն, կարծում ենք, որ այս նախաձեռնությունները չպետք է դադարեցնել և համապատասխան քարոզչական աշխատանքներից հետո հնարավոր կլինի դարձյալ անդրադառնալ դրանց:

Այս իրավիճակում մեր կողմից ընդունելի չեն կարող համարվել նաև այն առանձին նախաձեռնությունները, որոնցով այս կամ այն անհիմն պատճառաբանությամբ, կամ միջազգային փաստաթղթերի դրույթների յուրովի մեկնաբանության հիման վրա փորձ է արվում իրավական հիմքեր ստեղծել դատախազության լիազորություններն անհարկի սահմանափակելու, կոռուպցիայի դեմ պայքարում վերջինիս պոտենցիալ հնարավորությունները ջլատելու համար: Թերևս, այս հարցադրման տեսանկյունից մշտապես նկատվել է հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության և հասարակական միավորումների միանշանակ ու հստակ դիրքորոշումը:

Ինչ վերաբերվում է տնտեսական բարեփոխումներին, ապա դատախազությունը ևս կոնկրետ միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք նպատակաուղղված լինեն տնտեսվարողների համար հավասար մրցակցային դաշտի ձևավորմանը, ստվերային տնտեսության բացահայտմանն ու վերացմանը: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից արձակվել է հրաման, որով հստակ կանոնակարգվել է պետական շահերի պաշտպանության հարցադրումներով պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց կազմակերպություններում ստուգումների անցկացման ընթացակարգը: Մասնավորապես, հիշյալ հրամանը բացառում է

դատախազության մարմինների կողմից որևէ անհիմն ու անօրինական միջամտություն՝ տնտեսվարող սուբյեկտների բնականոն գործունեությանը:

Կոռուպցիայի հաղթահարման և ստվերային տնտեսության սահմանափակման համար մենք բազմիցս իրավասու պետական մարմինների առջև խնդիր ենք դրել, որպեսզի իրենց լիազորություններին համապատասխան ձեռնարկեն միջոցներ, որոնք անհրաժեշտ են ֆինանսատնտեսական ապօրինի գործարքները բացահայտելու և կանխելու համար:

Դատախազությունում հատկապես պարբերաբար ամփոփվում են կոռուպցիայի դեմ պայքարին այս կամ այն չափով առնչվող այն միջազգային փաստաթղթերի պահանջների կատարմանն առնչվող հարցադրումները, որոնց վերջին շրջանում միացել է մեր երկիրը: Հայաստանի Հանրապետությունը, որպես ԵԱՀԿ անդամ-պետություն, դեռևս 2001թ. մայիսի 11-ին միացել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հայտնաբերման, առգրավման և բռնագրավման մասին» 1999 թվականի նոյեմբերի 8-ի Ստրասբուրգյան կոնվենցիային: Հետագայում, մասնակցելով 2002թ. հունիսի 24-ից 25-ն Անկարայում կայացած ԱՄՆ Պետական Դեպարտամենտի կողմից կազմակերպված ահաբեկչության և փողերի լվացման դեմ պայքարին նվիրված տարածաշրջանային համաժողովին, Հայաստանի Հանրապետությունը փողերի լվացման դեմ պայքարի ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու կոնկրետ առաջարկներ է ստացել, որոնց կատարման ուղղությամբ ևս աշխատանքներ են կատարվել:

Նշած գործընթացին առնչվող համապատասխան օրենսդրական ակտեր ստեղծելու համար, ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գործող, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանական և ազգային անվտանգության ծառայությունների, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչներից կազմված միջգերատեսչական հանձնաժողով: Այդ հանձնաժողովին իր մասնագիտական աջակցությունն են ցուցաբերել նաև դատախազության աշխատակիցները:

Արդյունքում, 2004թ. դեկտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ընդունվեց «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի նախագծի քննարկումներին մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ներկայացուցիչները, առանձին նորմերի վերաբերյալ ներկայացնելով կոնկրետ նկատառումներ:

Նկատի ունենալով, որ կոռուպցիոն հանցագործությունների փաստերով հարուցված քրեական գործերով օբյեկտիվ, բազմակողմանի և խորացված քննության կատարումն ապահովելու նպատակով առաջնահերթ պահանջներից է նաև հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և փողերի լվացման դեմ պայքարը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2005թ. փետրվարի 8-ի ցուցումով Հայաստանի Հանրապետության դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է այդ բնույթի գործերով արմատապես վերանայել դատախազական հսկողությունը: Մասնավորապես, դատախազների ուշադրությունը հրավիրվել է այն հանգամանքի վրա, որ ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման հանցատեսակի առարկա է հանդիսանում յուրաքանչյուր այնպիսի գույք, որը ձեռք է բերվել հափշտակությամբ, մաքսանենգությամբ, շորթմամբ, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի, թմրամիջոցների կամ հոգեմեդրոգոն միջոցների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտներից և այլն:

Հիշյալ ցուցումով հստակեցվել են փողերի լվացմանն առնչվող հանցագործությունների դեպքերով քննության տակտիկան, փորձագետներին առաջադրվող հարցերի շրջանակը, այն

պետական մարմինները, որոնց հետ հատկապես անհրաժեշտ է համագործակցել հիշյալ բնույթի հանցագործությունները բացահայտելու համար և այլն:

Որպես կանոն, հանցագործության նոր տեսակներ ամրագրող քրեափրավական նորմերի կիրառման ոլորտում բարդությունները մեծ մասամբ պայմանավորված են անհրաժեշտ փորձի և նեղ մասնագիտական գիտելիքների պակասով: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, փողերի լվացման հանցատեսակը քրեական օրենսդրությունում նախատեսելուց հետո, առաջին քրեական գործը Բուլղարիայում հարուցվել է շուրջ 4 տարի անց, Ռումինիայում՝ 3 տարի անց և այլն: Այս խոչընդոտը հաղթահարելու նպատակով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության գիտաուսումնական կենտրոնում կազմված ծրագրերում նկատելի տեղ է հատկացվել հենց այդ հանցատեսակներին առնչվող գիտագործնական հարցերին: Միաժամանակ, հիշյալ կենտրոնում ներկայումս մշակվում են մի շարք ձեռնարկներ՝ կոռուպցիայի դեմ պայքարի մի շարք ուղղություններով: Ընդ որում, այդ աշխատանքներին ներգրավվել են նաև ոլորտին քաջատեղյակ մի շարք իրավաբան-գիտնականներ:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն կոռուպցիայի բնորոշումը դեռևս չի տրվել, սակայն առաջնորդվելով միջազգային չափանիշներով, հարկ է նշել, որ 2004թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է կոռուպցիոն ռիսկ պարունակող 352 հանցագործության դեպք, 2003թ. գրանցված 261 դեպքի դիմաց, կամ տեղի է ունեցել կոռուպցիոն ռիսկ պարունակող հանցագործությունների դեպքերի աճ՝ 91-ով:

Նշված փաստը բացատրվում է այն հանգամանքով, որ հաշվետու տարում իրավասու պետական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման շնորհիվ բացահայտվել են այնպիսի հանցագործություններ, որոնք նախորդ տարիներին քիչ են բացահայտվել կամ ընդհանրապես չեն եղել: Մասնավորապես, եթե 2003թ. հարուցվել է ապօրինի ձեռնարկատիրության (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 188-րդ հոդված) 2 գործ, ապա 2004թ.՝ 23 գործ: 2004թ. հարուցվել է կեղծ ձեռնարկատիրության (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 189-րդ հոդված) 14 գործ, մինչդեռ 2003թ. նման դեպքեր չեն արձանագրվել:

2004թ. ընթացքում արձանագրվել են նաև այնպիսի նոր հանցատեսակներ, ինչպիսիք են կազմակերպված հանցավոր խմբերի կողմից իրականացված մարդկանց առևտուրը (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132-րդ հոդված)՝ 2 գործ, առևտրային կաշառքը (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 200-րդ հոդված)՝ 6 գործ, ակնհայտ անարդար դատավճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 352-րդ հոդված)՝ 1 գործ:

Հարկ է նշել, որ 2003թ. համեմատ առանձին հանցատեսակներով արձանագրված դեպքերը 2004թ. նվազել են: Մասնավորապես, նվազել են ընտությունների հետ կապված հանցագործությունները, եթե 2003 թվականին ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու փաստի առթիվ (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-րդ հոդված) հարուցվել է 4 գործ, ապա 2004թ. հարուցվել է 2 գործ, իսկ 2003թ. ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու վերաբերյալ հարուցված 5 գործի դիմաց 2004թ. հարուցվել է ընդամենը 2 գործ:

Ուշադրության են արժանի այն հանցատեսակները, որոնք 2003թ. համեմատ աճել են: Մասնավորապես, յուրացնելու կամ վատնելու դեպքերը (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 179-րդ հոդված) աճել են 8-ով և 2004թ. հարուցվել է 152 գործ, նախորդ տարվա 144 գործի դիմաց: Սնանկության ընթացքում անօրինական գործողությունների փաստի առթիվ 2003թ. հարուցված 2 գործի դիմաց, 2004թ. հարուցվել է 4 քրեական գործ: 37 դեպքով ավելացել են գանձվող հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարումները վճարելուց խուսափելու փաստի առթիվ հարուցված քրեական գործերը՝ 2003թ. հարուցված 20 գործի դիմաց 2004թ. հարուցվել է 57 քրեական գործ:

Մեկ դեպքով աճել են նաև առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 214-րդ հոդված), 4 դեպքով պաշտոնեական լիազորություններն անցնելու (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 309-րդ հոդված), 5 դեպքով պաշտոնեական կեղծիքի (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 314-րդ հոդված) և 1 դեպքով դատական ակտը չկատարելու (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 353-րդ հոդված) փաստերի առթիվ հարուցված քրեական գործերը:

2004թ. արձանագրվել է նաև կաշառք ստանալու երեք (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 311-րդ հոդված) և կաշառք տալու մեկ (Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 312-րդ հոդված) դեպք:

Հաշվի առնելով կոռուպցիոն ռիսկ պարունակող վերը նշված հանցագործությունների դեմ պայքարի արդիականությունը, դատախազության մարմինների ուշադրության կենտրոնում է գտնվում հատկապես հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վերադարձման խնդիրը: Այս ոլորտում կատարված աշխատանքները և ցուցանիշները նկատելիորեն գերազանցում են ԱՊՀ երկրների դատախազության մարմինների կողմից ներկայացված տվյալներին:

2004թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրված հանցագործությունների դեպքերով Հայաստանի Հանրապետության դատախազության և ոստիկանության քննիչների վարույթում քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով պետությանը և տնտեսվարող սուբյեկտներին պատճառված նյութական վնասը կազմել է 5 մլրդ 902,0 մլն դրամ, որից նախաքննության և նյութերի նախապատրաստման ընթացքում վերականգնվել է 2 մլրդ 632,7 մլն դրամը, կամ 44,6 %-ը: Այս ոլորտում, հատկապես բարվոք ցուցանիշներ են արձանագրվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության քննչական վարչությունում:

Բացի այդ, պետական շահերի պաշտպանության հարցադրումներով դատախազության կողմից դատարան հարուցված հայցերով վերականգնվել է 4 մլրդ 276,8 մլն դրամ, իսկ հայցերի նախապատրաստման ընթացքում՝ պատասխանողների կողմից, կամովին վերականգնվել է 1 մլրդ 474,0 մլն դրամ: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ոլորտում գերակշռում են պետական գույքի հափշտակությանը պատճառված վնասը հատուցելուն, պետական սեփականություն հանդիսացող գույքը աճուրդով վաճառելու ապօրինի գործարքներն անվավեր ճանաչելուն, հարկային պարտավորությունները և այլ պարտադիր վճարումները կատարելուն առնչվող հայցապահանջները: Այսպես, պետական գույքի հափշտակությանը պատճառված վնասը հատուցելու պահանջով բավարարված հայցերով վերականգնվել է 189,2 մլն դրամ, հարկային պարտավորությունները և այլ պարտադիր վճարումները կատարելուն առնչվող հայցապահանջներով վերականգնվել է 3 մլրդ 391 մլն դրամ և այլն:

Հարկ է նկատել նաև, որ դատարանների անօրինական ու անհիմն վճիռների բողոքարկման արդյունքում կանխվել են 1 մլրդ 804 մլն դրամ գումարի չափով գանձումներ պետական բյուջեից, կամ ապահովվել են համապատասխան մուտքեր: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Վրաստանի իրավապահ մարմինների կողմից վերակազմված գումարը զիջում է վերոհիշյալ ցուցանիշներին մոտ երեք անգամ: Նկատենք նաև, որ այդ երկրում կոռուպցիայի և, հատկապես, դրա այնպիսի դրսևորման դեմ պայքարը, ինչպիսին է ստվերային տնտեսությունը, միջազգային կառույցների կողմից միանշանակ դրական է գնահատվում:

Անհրաժեշտ է փաստել, որ հանցագործությունների, մասնավորապես կոռուպցիոն ռիսկ պարունակող հանցագործությունների դեմ տարվող պայքարն առավել արդյունավետ կլինի և կապահովվի պատժի՝ օրենքով նախատեսված սոցիալական արդարության սկուզբունքը, եթե նշված հանցագործությունների հետևանքով պատճառված նյութական վնասի և դրա վերականգնման տարբերությունը հասցվի նվազագույնի:

Կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ դատախազության գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2004թ. ապրիլի 30-ի հրամանով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է կոռուպցիայի դեմ պայքարի բաժին՝ բաժնի պետի, բաժնի 2 ավագ դատախազի և բաժնի 2 դատախազի հաստիքակազմով: Նշված բաժինը 2005թ. համարվել է ևս մեկ ավագ դատախազով և 2 դատախազներով:

Կոռուպցիայի դեմ պայքարի արդիականության, միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան դատախազության գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով, բաժնի կողմից նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ստորաբաժանումների պետերին, Երևան քաղաքի, մարզերի, համայնքների, Հայաստանի Հանրապետության զինվորական և կայազորների դատախազներին հասցեագրված Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխան հանձնարարական, որի հիման վրա ստացված հաղորդումներով կատարվում են անհրաժեշտ ամփոփումներ:

Բաժնի կողմից, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության հետ համատեղ, ստացված ահազանգերի հիման վրա ուսումնասիրվել են տնտեսական և առաջին ատյանի դատարանների վարույթում քննված մի շարք քաղաքացիական գործեր, որոնցով կայացված վճիռները բողոքարկելու համար Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերվել է 34 վճռաբեկ բողոք:

2004թ. մայիսից մինչև օրս, ֆիզիկական և իրավաբանական անձանցից բաժնում ստացվել և ընթացք է տրվել տարբեր բնույթի շուրջ 150 դիմում-բողոքների և հաղորդումների, կատարվել է 60-ից ավելի քաղաքացիների ընդունելություն:

Ստացված դիմումների և ահազանգերի հիման վրա բաժնի կողմից նախապատրաստվել են թվով 8 նյութեր, որոնցից երեքով քրեական գործ հարուցելը մերժվել է հանցակազմի բացակայության, երկուսով՝ իրադրության փոփոխման պատճառով, երեքով հարուցվել են քրեական գործեր:

Բաժնի կողմից նախապատրաստված նյութերով՝ խարդախության և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատավորների կողմից ակնհայտ անարդար վճիռ կայացնելու փաստերով 2004թ. հուլիսի 15-ին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 352-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 61202504 քրեական գործը, որից խարդախության վերաբերյալ մասը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, անջատվել և մեղադրական եզրակացությամբ 2004թ. դեկտեմբերի 8-ին ուղարկվել է դատարան, իսկ մյուս մասով նախաքննությունը շարունակվում է:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով 2004թ. օգոստոսի 3-ին հարուցվել է թիվ 61202804 քրեական գործը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պետական պահուստի գործակալության պետ Աշոտ Ալեքսանյանի կողմից առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու վերաբերյալ և նույն օրը՝ նախաքննություն կատարելու համար, այն ուղարկվել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության քննչական վարչություն:

Թիվ 61202504 քրեական գործի նյութերով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի կարգով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ և 315-րդ հոդվածների 1-ին մասերի հատկանիշներով 2004թ. հոկտեմբերի 25-ին հարուցվել է թիվ 61204104 քրեական գործը՝ ԴԱՀԿ Երևանի ստորաբաժանման հարկադիր կատարող Արտավազ Սարգսյանի վերաբերյալ: Քրեական գործի նախաքննությունն ավարտվել և մեղադրական եզրակացությամբ 2004թ. դեկտեմբերի 30-ին ուղարկվել է դատարան:

Թիվ 61202504 քրեական գործի նյութերով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի կարգով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 308-րդ հոդվածի 2-րդ մասի և 309-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով 2004թ. նոյեմբերի 16-ին հարուցվել է թիվ 61204104 քրեական գործը՝ «Հյուսիսային պողոտա և կասկադ» ՃԻԳ ՊՈԱԿ-ի և այլ պաշտոնատար անձանց վերաբերյալ, որի նախաքննությունն ընթացքի մեջ է:

Քաղաքացու դիմումների հիման վրա ուսումնասիրվել է խարդախության վերաբերյալ նախկինում վարույթը կարճված թիվ 13209702 քրեական գործի նյութերը և 2004թ. հոկտեմբերի 28-ին նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով վարույթ է հարուցվել, որով ձեռք բերված ապացույցների հիման վրա քրեական գործի կարճված վարույթը 2004թ. նոյեմբերի 15-ին նորոգվել է, որի մի մասով նախաքննությունն ավարտվել և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ մյուս մասով նախաքննությունը շարունակվում է:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ԳԱՀԿ ծառայության նախկին հարկադիր կատարողի կողմից խարդախությամբ ուրիշի առանձնապես խոշոր չափերի գույքը հափշտակելու փաստի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 2005թ. մարտի 24-ին հարուցվել է թիվ 61200805 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Էրեբունի և Նուբարաշեն համայնքների դատախազություն:

Արարատի մարզի սոցիալական ապահովագրության Մասիսի տարածքային գործակալության առաջատար մասնագետ Արտակ Մուրադյանի կողմից կաշառք ստանալու փաստի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով 2005թ. ապրիլի 14-ին հարուցվել է թիվ 61201905 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից պաշտոնական կեղծիք կատարելու և ակնհայտ անարդար վճիռ կայացնելու փաստի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 314-րդ և 352-րդ հոդվածների 1-ին մասերով, 2005թ. ապրիլի 14-ին հարուցվել է թիվ 61202005 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Արարատի մարզի սոցիալական ապահովագրության Մասիսի տարածքային գործակալության պետ Բաբաջան Բաբախանյանի և նույն ծառայության առաջատար մասնագետ Նարինե Ստեփանյանի կողմից կաշառք ստանալու փաստի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասով, 2005թ. ապրիլի 19-ին հարուցվել է թիվ 61202105 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հանձնարարությամբ և քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա ուսումնասիրվել են դատախազության և ոստիկանության մարմինների վարույթում քննվող և ընթացքի մեջ գտնվող, ինչպես նաև նախկինում վարույթը կարճված կամ կասեցված բազմաթիվ քրեական գործեր, որոնցից երկու նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին, իսկ մեկ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումները վերացվել են, իսկ ընթացքի մեջ գտնվող այլ նյութերով տրվել են համապատասխան գրավոր ցուցումներ:

Քննված քրեական գործերով և նախապատրաստված նյութերով փաստված հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և վերացնելու համար ներկայացվել է մեկ միջնորդագիր, իսկ երկու պաշտոնատար անձ նախազուգուցվել են օրենքի խախտման անթույլատրելիության մասին:

Բացի նշվածներից, բաժնի կողմից ուսումնասիրվել և համապատասխան կարծիք է ներկայացվել ԱՊՀ երկրների գլխավոր դատախազների կողողինացիոն խորհրդից ստացված առաջարկների վերաբերյալ, նախապատրաստվել և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի ստորագրությամբ մարզերի, համայնքների, Երևան քաղաքի դատախազություններին և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության

կառուցվածքային ստորաբաժանումներին է ուղարկվել «Վճարահաշվարկային գործիքների և ծառայությունների միջոցով իրականացվող գեղձարարությունները» վերտառությամբ մեթոդական նյութեր՝ այն ուսումնասիրելու և գործնական աշխատանքում օգտագործելու համար:

Բնականաբար, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության գործուն աջակցությամբ հասարակական հնչելություն ունեցող կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքեր են բացահայտվել և քննվել նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության քննչական վարչությունում, որոնցից, թերևս, կարելի է առանձնացնել հետևյալ քրեական գործերը:

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Համլետ Սարիբեկի Մաթևոսյանը նախնական համաձայնության գալով պետական մեղադրող, Գուգարքի զինվորական կայազորի դատախազի օգնական Գառնիկ Մոսիի Չախմախչյանի հետ, դատարանի վարույթում քննվող թիվ 47101703 քրեական գործով՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ, 238-րդ հոդվածի 3-րդ և 235 հոդվածի 1-ին մասով մեղադրվող, ամբաստանյալ Համլետ Մուսայելի Ղարախանյանի նկատմամբ նշանակվող պատիժը պայմանականորեն չկիրառելու համար 2004թ. սեպտեմբերի 7-ին նրանից ստացել է 408.000 դրամին համարժեք 800 ԱՄՆ դոլար կաշառք:

Փաստի առթիվ նույն օրը հարուցված թիվ 62204204 քրեական գործով Հ.Մաթևոսյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով, իսկ Գ. Չախմախչյանին՝ 311-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանք և քրեական գործը 2004թ. սեպտեմբերի 30-ին նրանց՝ նույն հոդվածներով դատի տալու միջնորդությամբ, ուղարկվել է դատարան և կայացվել է դատավճիռ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր «Անշարժ գույքի կադաստր» Եղվարդի ստորաբաժանման առաջատար մասնագետ Էդուարդ Մերուժանի Առաքելյանը հողի սեփականության վկայական տալու պատրվակով, խաբեությամբ դրդել է Զովունի գյուղի բնակիչ Էդիկ Մանուկյանին իրեն 300 ԱՄՆ դոլար կաշառք տալ:

Փաստի առթիվ 2005թ. մարտի 29-ին հարուցված քրեական գործով Էդուարդ Առաքելյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով և 38-311-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և քրեական գործը նրան դատի տալու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (դատաքննությունը դեռևս տեղի չի ունեցել):

2005թ. հունվարի 24-ին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասով, 205-րդ հոդվածով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62200305 քրեական գործը՝ «Առողիտ-խորհրդատու», «Առողիտ-խորհուրդ-սերվիս», «Շալեկոնսալտինգ» ՍՊԸ-ների տնօրեն ու գանձապահ Լևոն Հովհաննիսյանի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության ֆինանսական վերահսկողության վարչության պետ Լյովա Շահինյանի կողմից կեղծ փաստաթղթեր կազմելու, գանձվող հարկեր վճարելուց խուսափելու և առանձանպես խոշոր չափերի՝ 74.000.000 դրամի, հափշտակություն կատարելու դեպքի առթիվ:

Կատարած հանցանքի համար 2005թ. փետրվարի 22-ին Լյովա Գառնիկ Շահինյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով ու նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանք: Լևոն Հովհաննիսյանը 2005թ. փետրվարի 23-ին մահացել է: Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

ԱՄՆ-ում «Հայկական ավիատոլիներ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Կոնստանտին Առուստամյանը յուրացրել է ավիատոմսերի վաճառքից ընկերությանը վճարման ենթակա առանձնապես խոշոր չափի գումարներ և օգտագործել է ակնհայտ կեղծ փաստաթուղթ:

Փաստի առթիվ հարուցված քրեական գործով Կ.Առուստամյանին մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-

ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով ու քրեական գործը նրան դատի տալու միջնորդությամբ 2004թ. դեկտեմբերի 27-ին ուղարկվել է դատարան: Կայացվել է դատավճիռ:

Նախաքննության ընթացքում Կ. Առուստամյանի կողմից վերականգնվել է 150.000 ԱՄՆ դոլարի չափով նյութական վնաս:

Կոռուպցիոն հանցագործությունների միասնական հաշվառում վարելու նպատակով, հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի նիստերի ժամանակ իրավապահ մարմինների ներկայացուցիչների համատեղ քննարկումների արդյունքում, որին մասնակցել են նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ներկայացուցիչները, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ամրագրված հանցագործություններից, որպես կոռուպցիոն ռիսկ պարունակող, առանձնացվել են թվով 59 հանցատեսակներ, իսկ Հայաստանի Հանրապետության դատախազության մարմիններում այդ հանցագործությունների հաշվառումը և վիճակագրական հաշվետվությունները միասնական և անթերի կատարելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2005թ. փետրվարի 28-ի թիվ 7 հրամանով հաստատվել է նաև քննչական աշխատանքի մասին հաշվետվության հատուկ ձև, որում արտացոլվելու է միայն «Կոռուպցիոն ռիսկ պարունակող» վերը նշված, թվով 59 հանցագործությունների շարժը:

Նկատի ունենալով, որ կոռուպցիայի դեմ պայքարում վճռորոշ նշանակություն ունի նաև իրավապահ մարմիններում կադրերի ճիշտ ընտրությունն ու տեղաբաշխումը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2004թ. մայիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակիցների ատեստավորման մասին» հրամանում կատարված փոփոխությամբ սահմանվել է, որ «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակիցների ատեստավորման հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում աշխատանքի ընդունվելու ցանկություն հայտնած, ինչպես նաև համակարգում չաշխատող և դատախազների պաշտոնեական պիտանիության ամենամյա ցուցակում ընդգրկվելու համար դիմած անձանց վերաբերյալ՝ նրանց մասնագիտական գիտելիքների ու գործնական հատկանիշների նախնական ստուգման և գնահատման միջոցով»:

Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ 2005թ. մարտի 26-ին կայացած կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստի արդյունքների վերաբերյալ թիվ 29-42 արձանագրության դրույթների առնչությամբ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրի 7.1 կետով 2004-2006թթ. նախատեսվել է բարձրացնել իրավապահ մարմինների տեխնիկական հագեցվածությունը:

Նշված կետի պահանջի կատարման շրջանակում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը կազմել է շարժական կրիմինալիստիկական լաբորատորիա ձեռք բերելու ծրագիր, որի արժեքը կազմում է 86.285 եվրո: Այդ առնչությամբ պատրաստվում է միջնորդություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու համար:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում նախապատրաստվել է տեխնիկական աջակցության վերաբերյալ 900.000 եվրո արժողությամբ ծրագիր, որը ներկայացվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ազգային համակարգման կենտրոններին» ծրագրին: Նույնաբովանդակ խնդրանքով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը դիմել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող «Մարդկանց առևտրի դեմ պայքարի ծրագիր, օժանդակություն հզորությունների զարգացմանը և աջակցություն որոնյալներին»:

Միաժամանակ, տեխնիկական հագեցվածության վիճակը բարելավելու հարցերով բանակցություններ են վարվում միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ և արդեն կան պայմանավորվածություններ:

Հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի 7.2 կետով նախատեսված իրավապահ մարմինների աշխատողների որակավորման բարձրացման վերաբերյալ պահանջը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն իր գիտատուսմնական կենտրոնի միջոցով կատարում է, մշտապես կազմակերպվում են թեմատիկ և համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացներ, հրավիրվում են սեմինարներ՝ առավել բարդ կամ նոր տեսակի հանցագործությունների նախաքննությունը խորությամբ և համակողմանի կազմակերպելու նպատակով: Նույն նպատակին են ուղղված նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից կառուցվածքային ստորաբաժանումներին պարբերաբար ուղարկվող ցուցումներն ու տեղեկատվական նամակները:

Նախագծի 7.3 կետի պահանջների կատարման շրջանակներում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2005թ. մարտի 9-ի թիվ 6 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակցի վարքագծի կանոնագիրքը», որի մասին կխոսվի ստորև:

Ինչ վերաբերում է ծրագրի 7.4, 7.6 և 7.7 կետերում նշված պահանջների կատարմանը, ապա Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում աշխատողների աշխատավարձի բարձրացման և սոցիալական վիճակի բարելավման նպատակով մշակվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծ:

Նույն կարգով մշակվում է «Դատական փորձագիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ: Երկու նախագծերն էլ՝ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով, 2005թ. ընթացքում կներկայացվեն Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Կոռուպցիայի դեմ պայքարում դատախազության մարմինների աշխատանքը բնավ չի սահմանափակվում սուկ արտագերատեսչական գործունեությամբ: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ցուցումով 2004թ. 2-րդ կիսամյակին գլխավոր դատախազության կոլեգիան շուրջ 4 ամիս հանգամանորեն, մի շարք այնպիսի հարցադրումներով, ինչպիսիք են դատախազության աշխատակիցների կոնկրետ ծանրաբեռնվածությունը, աշխատանքների կազմակերպումը և այլն. ուսումնասիրել է դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը, ինչի արդյունքում Հանրապետության գլխավոր դատախազի կողմից արձակվեցին նշված ոլորտներում կոնկրետ բարեփոխումներ նախատեսող հրամաններ:

Ուսումնասիրության արդյունքներով իրականացվել են էական կադրային տեղաշարժեր, ինչն ուղղված է եղել հաստիքների հիմնավորված վերաբաշխմանը: Խնդիրը կայանում է նրանում, որ տարիներ շարունակ հաստիքների ծանրաբեռնվածության հարցը համալիր քննարկման առարկա չի եղել, հաշվի չի առնվել սպասարկվող տարածքներում քրեաիրավական վիճակում կատարված էական փոփոխությունների փաստարկը և այլն, ինչի արդյունքում ստեղծվել էր ծանրաբեռնվածության անհարկի անհամամասնություն՝ բավարար պայմաններ ստեղծելով կոռուպցիոն երևույթների դրսևորման համար: Խնդիրն այն էր, որ համակարգում հայտնվել էին գրեթե չնչին ծանրաբեռնվածություն ունեցող, սակայն լայն լիազորություններով օժտված պետական ծառայողներ, ինչը մասամբ նպաստում է, որպեսզի վերջիններս փորձ անեն զբաղվել ձեռնարկատիրությամբ կամ թույլ տան այլ չարաշահումներ:

Դրա հետ մեկտեղ միջոցներ ձեռնարկվեցին դատախազության համակարգի կարիքավոր (համակարգում կան բազմազավակ ընտանիքներ ունեցող, վարձակալությամբ բնակվող և այլ ծառայողներ) աշխատակիցների սոցիալական վիճակը հնարավորինս բարելավելու ուղղությամբ. մասնավորապես, խնայողությունների մի մասն ուղղվեց հենց այդ նպատակի իրականացմանը:

Այդ աշխատանքների տրամաբանական շարունակությունը հանդիսացավ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2005թ. մարտի 9-ի թիվ 6 հրամանով «Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակցի վարքագծի» Կանոնագրքի հաստատումը: Այն, թերևս, հանդիսանում է դատախազության գործունեության կարգավորման

բարոյական առաջին փաստաթուղթը և անհամեմատ խիստ պահանջներ է առաջադրում վերջիններին՝ ոչ միայն ծառայողական, այլև՝ արտածառայողական հարաբերություններում: Ընդ որում, հիշյալ կանոններին տրված է նաև իրավական արժեք, քանզի դրանք խախտելու դեպքում դատախազության աշխատակիցը կարգապահական պատասխանատվություն է կրում «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Վարքագծի կանոնագրքի համաձայն դատախազության աշխատակցին արգելվում է անդամակցել քաղաքական կազմակերպությանը, ինչպես նաև որևէ կերպ զբաղվել ակտիվ քաղաքականությամբ: Բացի այդ, դատախազության աշխատակիցը պարտավոր է ծառայական գործունեությունն իրականացնել ինքնուրույն, անաչառ և օբյեկտիվ, պաշտոնատար անձանց, մերձավորների, ընկերների և ծանոթների ապօրինի ազդեցությունից անկախ, զերծ մնալ անհատական կամ խմբակային շահերի կամ լրատվության միջոցների կամ տեղական, անձնական, ազգային կամ քաղաքական ցանկացած ազդեցությունից, ազատ լինել քննադատվելու մտավախությունից:

Կոռուպցիոն երևույթների դրսևորումների շրջանակը սահմանափակելու և դրանց նպաստող պայմանները վերացնելու նպատակով արմատապես վերափոխվել է դատախազության կադրային քաղաքականությունը, այն խստորեն համապատասխանեցվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից 2000թ. հոկտեմբերի 6-ին կայացած 724-րդ նիստում ընդունված «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» թիվ R/2000/19 հանձնարարականի դրույթներին: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի վերը նշված հրամանի համաձայն դատախազության համակարգ կարող են ընդունվել բացառապես ատեստացիոն հանձնաժողովում քննություն հանձնած և նշված հանձնաժողովի դրական եզրակացությանն արժանացած իրավաբանները:

Արդյունքում հնարավոր է եղել դատախազության համակարգ ընդունել գիտական ու գործնական մեծ ներուժ ունեցող և պետական համակարգում իրենց լավագույնս դրսևորած անձանց, այդ թվում՝ մի շարք իրավաբանական գիտությունների թեկնածուների: Եվ որպես տրամաբանական ելք, դատախազության համակարգից ազատվեցին տասնյակ աշխատակիցներ, որոնք ակնհայտորեն չէին համապատասխանում առաջադրված նոր պահանջներին. ընդ որում, դրանց մի մասը նախապես սեփական նախաձեռնությամբ ազատվեց համակարգից՝ ըմբռնելով, որ իրենց մասնագիտական պատրաստվածությունը և գործնական ունակությունները համահունչ չեն դատախազության համակարգում աշխատելու համար անհրաժեշտ մոտեցումներին:

Այսպես, 2004թ. դատախազության համակարգից ազատվել է 36 աշխատակից, որոնցից միայն 28 տոկոսը՝ համաձայն իր դիմումի: Իրենց նախաձեռնությամբ երկարամյա ծառայության կենսաթոշակի է անցել ևս 15 աշխատակից. նկատենք, որ վերջիններս կարող էին անարգել աշխատել մինչև 65 տարին լրանալը, սակայն, հաշվի առնելով, որ ի վիճակի չեն բավարարել ներկայացվող նոր, առավել պատասխանատու պահանջներին, նախընտրել են համակարգից ազատվելը: Կարգապահական պատասխանատվության կարգով համակարգից ազատվել է 4 աշխատակից:

Հաջորդ նորամուծությունը կապված է դատախազության աշխատակիցների պատճառաբանված տեղափոխումների (ռոտացիայի) հետ: Դատախազության կազմակերպման ու գործունեության վերաբերյալ օրենսդրական ակտերը նմանաբնույթ ինստիտուտ չեն նախատեսում, սակայն, ելնելով Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից 2000թ. հոկտեմբերի 6-ին կայացած 724-րդ նիստում ընդունված «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» թիվ R/2000/19 հանձնարարականի պահանջներից, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից կատարվել են էական տեղափոխումներ: Ընդ որում, դրանց հիմքում դրվել է նեղ մասնագիտացման ապահովման, անհարկի լճացման երևույթը կանխելու, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու և նմանաբնույթ այլ պահանջների պահպանման անհրաժեշտությունը:

Տեղափոխումների ինստիտուտը կիրառվել է դատախազության 58 աշխատակիցների նկատմամբ, որը կազմում է ամբողջ կազմի շուրջ 10 տոկոսը: Մասնավորապես, համարժեք պաշտոններին տեղափոխվել (ռոտացիոն սկզբունքով) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 1 վարչության պետ, մարզերի, համայնքների 14 դատախազ, համայնքների դատախազության 5 քննիչ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 1 ավագ օգնական, վարչության 3 դատախազ, մարզի դատախազի 5 ավագ օգնական և այլն: Առաջխաղացում են ունեցել և, հատկապես, բարձր պաշտոններում են նշանակվել դատախազության միայն այն աշխատակիցները, որոնք ներգրավված են եղել դատախազների պաշտոնական առաջխաղացման ցուցակներում, ունեցել են դատախազության համակարգում նվազագույնը 10 տարվա ծառայության ստաժ և ակնհայտորեն առանձնացել են իրենց կազմակերպական, գիտագործնական և բարոյական բարձր հատկանիշներով: Ընդ որում, այս ինստիտուտի կիրառումը ևս կրելու է շարունակական բնույթ և, միաժամանակ մշտապես հաշվի է առնվելու սոցիալական արդարության սկզբունքի ու աշխատակիցների օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը:

Շահերի անհարկի բախման երևույթը բացառելու նպատակով, ինչը ևս հանդիսանում է կոռուպցիոն ռիսկերից, ներկայումս մեծ կարևորություն է տրվում դատախազության աշխատակիցների կողմից ձեռնարկատիրությամբ չզբաղվելու օրենսդրական պահանջի հետևողական պահպանմանը: Ընդ որում, ձեռնարկվում են գործնական քայլեր՝ նաև հիշյալ երևույթի քողարկված դրսևորումները բացահայտելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ:

Կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն են ուղղված նաև դատախազության կառուցվածքում կատարված այլ բարեփոխումները: Այսպես, համալիր ուսումնասիրությունների արդյունքում արմատապես վերակառուցվել են մարզերի, համայնքների և կայազորների դատախազությունների կազմակերպական աշխատանքները, համապատասխան աշխատակազմով նստավայրեր ու աշխատավայրեր են ստեղծվել դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներում, հստակ սահմանազատվել են կառուցվածքային ստորաբաժանումը գլխավորող դատախազի, նրա տեղակալի, ավագ օգնականի, օգնականի, գլխավոր դատախազության ստորաբաժանումների մյուս աշխատակիցների լիազորությունները (նախկինում տարիներ շարունակ այդ հարցը կարգավորված չի եղել, ինչն էապես ազդել է աշխատանքների բնականոն կազմակերպմանն ու հանդիսացել սողանցք՝ հնարավոր չարաշահումների համար):

Կոռուպցիայի դեմ պայքարն առավել գործնական դարձնելու հիմնախնդրի լուծմանն է ուղղված նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամանով ստեղծված հանձնախմբի կողմից «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագծի մշակումը: Մասնավորապես, խնդիր է դրվում առավել հստակեցնել դատախազության աշխատակցի կարգավիճակը, բարձրացնել վերջինիս, որպես պետական ծառայողի պատասխանատվությունը, դատախազության համակարգ ընդունվելու գործընթացը դարձնել առավել թափանցիկ, կադրային քաղաքականությունում ներդնել քննության առավել հստակ ընթացակարգեր, բացառել կամայականությունները և այլն:

Բնականաբար, արված աշխատանքի ամփոփ վերլուծությունը միաժամանակ կանխորոշում է կոռուպցիայի դեմ պայքարում դատախազության մարմինների կազմակերպման ու գործունեության բարելավման ուղիները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման վիճակը բարելավելու նպատակով առավել գործուն դարձնել դատախազական հսկողությունը հետաքննության մարմինների գործունեության նկատմամբ, պահանջել և առավել նպատակասլաց իրացնել օրենսդրությամբ սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական մարմինների տնօրինության տակ գտնվող տեղեկատվությունը.

ծրագրային ուսումնասիրություններ կատարել ստուգման և վերահսկողության գործառույթներ իրականացնելու լիազորությամբ օժտված պետական մարմիններում, վերլուծել հիշյալ կառույցների գործունեությունում տեղ գտած թերությունների ու իրավախախտումների պատճառները և համապատասխան դատախազական ակտերի կիրառմամբ ապահովել վերջիններիս բնականոն գործունեությունը.

դատական իշխանության անկախության սահմանադրական սկզբունքի պահպանմանն աջակցելով, միաժամանակ գործուն միջոցներ ձեռնարկել անօրինական ու անհիմն դատական ակտերը ժամանակին հայտնաբերելու և դրանք բողոքարկելու ուղղությամբ: Դատական պրակտիկայի համակողմանի վերլուծության հիման վրա պարզել հատկապես լայն տարածում ունեցող նույնաբնույթ անօրինական ու անհիմն դատական ակտեր կայացնելու պատճառներն ու դրան նպաստող պայմանները և դատախազական ակտերի կիրառմամբ ձեռնարկել դրանք վերացնելու բնականոն գործընթաց.

առավել գործնական դարձնել զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհամագործակցությունը, ընդլայնել համակարգչային և այլ մատչելի եղանակներով տեղեկատվություն տարածելու ցանցը, համակարգել և առավել արդյունավետ դարձնել զանգվածային լրատվության միջոցներում արձանագրված փաստերի քննարկման գործընթացը.

կադրային քաղաքականության շրջանակներում ատեստացիայի, գիտելիքներն ու գործնական ունակությունները պարբերաբար ստուգելու համապատասխան ինստիտուտների նպատակասլաց կիրառմամբ բացառել դատախազության համակարգում ներկայացվող պահանջներին չհամապատասխանող անձանց անձանց գործունեությունը, արմատապես բարելավվել աշխատակիցների որակավորումը և այլն:

Վերհիշյալ միջոցառումները սոսկ ընդհանրացված բնույթ ունեն, միաժամանակ, աշխատանքային ծրագրերով դրանք և մյուս խնդիրները կոնկրետացվում ու մշտապես վերանայվում են՝ հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարում առկա զարգացումներն ու միտումները:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն